

«ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԱՆ-Ք» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Հայկ Ավետիսյան, Արուսյակ Գնունի, Ա. Բորոխյան

Ներածություն. Սրբազան տարածքի¹ արժևորման տարրեր գոյություն ունեն դեռևս նախնադարյան և հինարևելյան մարդու աշխարհայացքում², սակայն առաջին սահմանումներն այս ոլորտում արել են անտիկ հեղինակները, որոնք առանձնացնում են սրբազան, հասարակական և մասնավոր տարածքները, խոսում վերջիններիս նշանակության և տեղադրության խնդիրների մասին³: Անտիկ շրջանում ձևավորված տեսակետները մասամբ շարունակվեցին միջնադարում, սակայն այն տարբերությամբ, որ սրբազան տարածքը և դրա բաղադրատարրերը ձեռք բերեցին առավելապես տրանսցենդենտալ որակներ⁴: Սրբազան տեղանքի մասին պատկերացումներն արտացոլված են նաև հայ պատմական, ազգագրական և հնագիտական նյութերում⁵:

Վերջին տասնամյակներում մասնագիտական գրականության էջերում մեծ տեղ է հատկացվում «ծխական տարածք», «ծխական լանդշաֆտ», «պաշտա-

¹ Այս հոդվածը գրվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում (ըստ Նորագույն հնագիտական տվյալների)» գիտական թեմայի սահմաններում՝ Սյունիքի սրբազան տեղանքը հետազոտելու ընթացքում առաջացած տեսական խնդիրներին պատասխանելու առիթով:

² **Леви-Брюль Л.**, Первобытное мышление. М. 1930; **Г. Франкфорт, Г. А. Франкфорт, Дж. Уилсон, Якобсен Т.**, В преддверии философии. М., 1984.

³ Այսպես, Հիպոդամուս Միլեթացին գտնում էր, որ պետության տարածքը պետք է բաժանվի երեք մասի՝ սրբազան, հասարակական և մասնավոր (հմմտ. **Aristotel, Polit. 2, V, 2, 35**): Արիստոտելը պաշտամունքի մասին հոգածությունը համարում էր պետության կարևորագույն խնդիրներից մեկը (**Aristotel, Polit. 7, VII, 4, 5**): Ընդ որում, ըստ նրա, քաղաքում պաշտամունքային կառույցները պետք է տեղադրված լինեն պետական պաշտոնյաների տների մոտ՝ պատշաճ և ամրացված վայրում, եթե օրենքը չի նախատեսում ծխական կառույցի մեկուսացված տեղադրություն. այս հատվածից ներքև պետք է լինի հրապարակը (**Aristotel, Polit. 7, XI, 1, 25-30**): Վիտրուվիուսը տաճարաշինությունը դիտարկում է որպես շինարարության կարևորագույն խնդիր, գրում է սրբազան օբյեկտների տեղադրության մասին՝ նշելով, որ Յուպիտերի, Յունոնայի և Միներայի տաճարները պետք է տեղադրված լինեն ամենաբարձր վայրում, Մերկուրիոսինը՝ ֆորումում, Մարսինը և Վեներայինը՝ քաղաքից դուրս (**Vitruvius, De Architectura 1, III, 1; 1, VII, 3**):

⁴ **Гуревич А. Я.**, Категории средневековой культуры. М., 1972.

⁵ **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա.** (խմբ.). Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան, 2001; Վ. Բարխուդարյան (խմբ.). Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005:

մունքային վայր» հասկացություններին¹: Խնդրի վերաբերյալ զարգացում են ապրում միջմասնագիտական մոտեցումներ և սա պատահական չէ, քանի որ ծիսական աշխարհագրությունը գտնվում է տարբեր մասնագիտությունների՝ փիլիսոփայության, կրոնագիտության, աշխարհագրության, մշակութաբանության, հնագիտության ուսումնասիրության տիրույթում և առնչվում է մարդկային վարքագծային կանոնների և ինքնության ձևավորման խնդիրներին²:

Սրբազան տարածք. Սրբազան տարածք հասկացությունը բավականին քննարկվել է մասնագիտական գրականության մեջ, սակայն դրա սահմանումը տատանվում է հեղինակից հեղինակ: Բնորոշելու համար սրբազան տարածքը՝ Մ. Էլիադեն օգտագործում է «հերոֆանիա» եզրը, որը նշանակում է «պարզապես ինչ-որ սրբազան բան, սկսած սրբազանի արտացոլումից քարում կամ ծառում»³: Ըստ նույն հեղինակի, սրբազան քարերը կամ ծառերը պաշտվում են ոչ թե ինքնին, այլ որ արտացոլում են ինչ-որ սրբազան մի երևույթ⁴: Ավելի կոնկրետ է Պ. Սորոկինը, ով դիտարկելով պաշտամունքի կամ ծեսի հետ կապված առարկաները սոցիալական երևույթների համատեքստում, նշում է, որ տվյալ դեպքում քարը կամ գերանը, որով կառուցվում է տաճարը հանդիսանում է կրոնական ապրումների արտացոլում⁵: Քարը կամ ծառն առանձին վերցրած նեղ հասկացություններ են, մինչդեռ ծիսական հուշարձանը հիմնականում հանդես է գալիս ոչ թե մեկուսի, այլ որոշակի բնական և մարդածին պայմաններում: Այս տեսանկյունից լավագույն ձևակերպում կարող էր հանդիսանալ «սրբազան տարածք»-ը, սակայն այն, ինչպես նկատում է Ա. Լիդովը, կրում է չափազանց ընդհանրական բնույթ⁶: Հիշյալ հասկացությունը կարելի է ընկալել լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով սրբազան տարածքն ընդգրկում է պատմաաշխարհագրական որոշակի միջավայրում հանդես եկող կրոնա-պաշտամունքային ոլորտին վերաբերող բոլոր տարրերը՝ բնական միջավայրով հանդերձ⁷: Այս

¹ Հայ իրականության մեջ հմնտ. Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան (խմբ.). Նշվ. աշխ.; R. Büttner, J. Peltz (ed.). Mythical Landscapes Then and Now. Yerevan. 2006.

² Емельянов В.В., Ритуал в древней Месопотамии, СПб., 2003, с. 27; Куценков П.А., Рассеивание и конвергенция, в кн.: Храм земной и небесный, М., 2004, с. 43, 52-53.

³ Элиаде М.. Мифы, сновидения, мистерии. М.-Киев, 1996, с. 141.

⁴ Նույն տեղում:

⁵ Сорокин П., Общая социология. В кн.: Сорокин П., Человек, цивилизация, общество. М., 1992, с. 45.

⁶ Իրականում գրականության մեջ շրջանառվող «սակրալ տարածք» արտահայտության հայերեն թարգմանությունը, որպես «սրբազան տարածք», այդքան էլ կոռեկտ չէ, հաշվի առնելով sanctus բառի թարգմանությունը, որը նշանակում է «ցանկապատված» (տես **Воловик В. Н.**, Категории сакрального ландшафта. ГВ, 2013, N 4, с. 27): Այս առումով թերևս ավելի նպատակահարմար կլիներ օգտագործել «սրբագործված» բառը:

⁷ **Воловик В. Н.**, նշվ. աշխ., էջ 28:

առումով, ներկայումս շրջանառվում է նույն Լիդովի կողմից առաջարկված «Հիերոտոպիա» եզրույթը (հունարեն «հիերոս»՝ սրբազան և «տոպոս»՝ տեղանք), որն, ըստ հեղինակի, արտացոլում է սրբազան տարածքների ստեղծման ընթացքը¹, իսկ վերջինիս հետազոտությունը թույլ է տալիս բացահայտել ուսումնասիրվող տարածքի կառուցվածքային առանձնահատկությունները²: Այս սահմանումն առաջին հայացքից բավարար է թվում, բայց մյուս կողմից, չէ՞ որ մարդկային կենսագործունեության հետ կապված ցանկացած տարածք կարող է ունենալ հիերոտոպիկ նշանակություն³ (հմմտ. Թալես Միլեթացու միտքը, թե «բոլոր իրերը լի են աստվածներով»)⁴: Հիերոտոպիկ նշանակություն կարող են ունենալ բնական տարածքները, սարերը, ձորերը, լեռնագագաթները⁵ և անգամ՝ դամ՝ ողջ երկիրը⁶:

Հռոմեական իրականության մեջ *templum* բառով կարելի էր բնորոշել ոչ միայն տաճարն այլև քաղաքը, ռազմական ճամբարը, նույնիսկ՝ խաչմերուկը⁷: Դրանով ֆետիշացվում էր ինչպես քաղաքի գաղափարը, այնպես էլ դրա առանձին բաղադրատարրերը (ճանապարհը, տունը, օջախը, ևն)⁸, ինչի ապացույց կարելի է համարել նաև քաղաքներում տարածում ստացած համապատասխան տաբուների համակարգը⁹: Սրանից ելնելով կարելի է եզրակացնել, որ սրբազա-

¹ **Лидов А. М.**, Иеротопия – создание сакральных пространств как вид творчества и предмет исторического исследования. «Иеротопия. Создание сакральных пространств в Византии и Древней Руси», М., 2006, с. 10.

² **Лидов А. М.**, Иеротопия – создание сакральных пространств как вид творчества и предмет исследования. Вступительная статья сборника «Иеротопия. Сравнительные исследования сакральных пространств», М., 2008, с. 5-11.

³ Հմմտ. **Элиаде М.**, Священное и мирское. М., 1994, с. 12: Մոսկվայի օրինակի համար հմմտ. **Лидов А. М.**, Иеротопия – создание сакральных пространств как вид творчества и предмет исторического исследования, с. 18:

⁴ **F. Schimpf.** Man-Nature-Religion: Thoughts Concerning Development, Form and Perception of Sacred. Sacral Landscapes.

⁵ **К. Bannikov**, Some Ideas on the Principles of Sacral Shape Areas on the Mohe: Towards the Reconstruction of Cosmography in Ethnological Methodology. SES, 2009 vol. 72, p. 154.

⁶ Այս տրամաբանությամբ հրեաների համար սրբազան տարածք էր հանդիսանում ողջ Ավետյաց Երկիրը, իսկ հույների համար՝ Հելլադան (տե՛ս G. A. Smith. The Historical Geography of the Holy Land. Jerusalem 1974, p. 80-88:

⁷ **А. Наговицын.** Мифология и религия этрусков. М., 2000, с. 67-68.

⁸ **J. Rykwert.** The Idea of a Town. Princeton 1988, p. 50-51. Սոցիո-մշակութային երևույթին հատուկ ֆետիշացման մասին հմմտ. **Сорокин П.**, Նշվ. աշխ., էջ 214-218: Տան օջախի պաշտամունքային նշանակության մասին հմմտ. **Գնունի Ա.**, Շենգավթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ, 2004, N 1, էջ 218-220; **Վարդումյան Դ.**, Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն) սրբարան, Հայոց սրբերը և սրբավայրերը, Ե., 2002, էջ 359:

⁹ Հմմտ.՝ **Оппенгейм А.**, Древняя Месопотамия. М., 1990, с. 75-76.

զանը (սակրալը) ու հասարակը (պրոֆանը) տարածքով համընկնում են և տարբերվում են միայն ընկալման մակարդակով¹:

Սրբազան վայր. գրականության մեջ հաճախ սրբազան տեղանքը ավելի նեղ իմաստով սահմանվում է որպես պաշտամունքային արարողությունների և ծիսակատարությունների անցկացման վայր²: Այս իմաստով, սրբազան վայրը կարելի է ընկալել որպես բնական տեղանքի մի հատված, որտեղ կենտրոնացած են տարբեր ժամանակների և կրոնների ծիսական հուշարձանները³: Միայն սրբազան վայրում է հնարավոր մարդու և վերին ուժերի հաղորդակցումը: Սակայն այն մաքուր աստվածային տարածք չէ, այլ որոշակիորեն չեզոք կամ ավելի ճիշտ՝ անցումային դիրք է գրավում, քանզի մարդիկ հաղորդակցվում են ոչ միայն վերին ուժերի, այլև միմյանց հետ: Ընդ որում, լանդշաֆտային բաղադրամասերը (գետեր, բարձունքներ, ևն) միայն ընդգծում են տարածքի սրբությունը⁴:

Սրբազան օբյեկտ. պաշտամունքային կամ ծիսական օբյեկտ է օրինակ՝ տաճարը, զոհարանը, դամբարանը և այլն⁵, հասկացություն, որը կարելի է նույնացնել Մ. Էլիադեի հիերոֆանիայի հետ: Այս համատեքստում գրականության

¹ Ի դեպ, դեռևս XX դարի 30-40-ական թթ. այս երևույթին ուշադրություն էր դարձրել Չ. Մո-րիսը՝ ընդգծելով, որ լանդշաֆտները կարող են ունենալ բազմակի ընկալումներ (մեջբե-րումն ըստ՝ *Е. Окладникова. Сакральные ландшафты и петроглифы. homo eurasicus. land. ru. sbornik 2010/ okladnikova. htm*):

² **О. А. Липинская.** Классификация и районирования культурных ландшафтов в рамках информационно-аксиологического подхода. с. 127. www.psk.gu.ru/projects/pgu/storage/web137/wrgu_02/wrgu_02-12pdf. Ե. Օկլադնիկովան, բնորոշելով սրբազան տեղանքը, առանձնացնում է հետևյալ որակական հատկանիշները. արեալություն (որոշակի ամփոփ սահմանագատված տարածք), ձևավորման և գոյատևման որոշակի օրինաչափություն (բնաաշխարհագրական պայմանների այն ամբողջությունը, որը կանխորոշում է հուշարձանների ստեղծման և գոյատևման օրինաչափությունները, որոնց մեջ որոշիչ դեր են կատարում կրոնական պատկերացումները) (*Окладникова Е., Сакральные ландшафты*):

³ **Воловик В. Н.,** նշվ. աշխ., էջ 31-32.

⁴ **M. J. Correia Santos,** Sacred Landscape and the Principal of Duality: The Rock-Cut Sanctuaries of the Western Iberian Peninsula. *Sacral Landscapes*; Д. Савинов, Природные объекты и сакральные процессы. *homo eurasicus. land. ru. sbornik 2010/ savinov. htm*. Հավանաբար այս հանգամանքը նկատի ունի Կիկերոնը՝ աստվածների տեսլականի մասին գրելիս (*Cicero, De Natura Deorum 1, XXXVIII, 105*):

⁵ Դամբարանային կառույցի առանձնահատկությունն է այն, որ այստեղ փաստորեն առկա են սրբազան տարածքին առնչվող բոլոր բաղադրատարրերը. ճանապարհ-դրոմոս, կենտրոն-խուլց (*Савостина Е. А., Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц, http://www.kladina.narod.ru/savostina2/savostina2.htm*; **Ольховский В. С.,** Погребально-поминальная обрядность в системе взаимосвязанных понятий. *СА 1986, N 1, с. 65-76, Леонова Н. Б., Смирнов Ю. А., Погребение как объект формального анализа. КСИА, вып. 148, М., 1976, с. 23*):

մեջ օգտագործվում է նաև «փոքրածավալ սրբազան օբյեկտ» կատեգորիան (օրինակ՝ դաշտերի և արոտավայրերի պահպանիչ, սահմանները կամ խաչմերուկները նշող, հիշարժան դեպքերի կապակցությունները տեղադրված միավորներ)¹: Դժվար չէ նկատել, որ այս պարագայում սրբազան օբյեկտը կամ հիերոֆանիան հանդես է գալիս յուրատեսակ առանցքի դերում, որի շուրջն էլ խմբավորվում են սրբազան վայրի այլ բաղադրատարրերը:

Պաշտամունքային միավոր կարող են հանդիսանալ նաև բնական օբյեկտները, որոնք կազմում են սրբազան վայրի ամենավաղ շերտը՝ նրա հիմնասյունը, որի շուրջ ձևավորվում են ծիսա-պաշտամունքային օբյեկտները²:

«Սրբազան լանդշաֆտ». մեկ այլ հասկացություն է «սրբազան լանդշաֆտ»-ը. լայն իմաստով այն սրբազան օբյեկտների և բնական համալիրների ամբողջությունն է: Ս. Ռոմանչուկը սրբազան լանդշաֆտ է անվանում բնական կամ բնական-մարդածին աշխարհագրական համալիրները, որոնք կատարում են մարդկանց հոգևոր պահանջմունքները բավարարելու գործառույթ: Ընդ որում, այստեղ էական դեր է վերապահված սրբավայրի գոյության շարունակականությունը³: Նեղ իմաստով, սրբազան լանդշաֆտը կազմում են տարածքային այն համալիրները, որոնք արժևորվում են ծիսական օբյեկտների առկայությամբ (ինչն, ի դեպ, արտացոլված է UNESCO-ի փաստաթղթերում)⁴:

Սրբազան տարածքը ձևավորող գործոնները. Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է եզրակացնել, որ թեպետ ողջ աշխարհը կարող է դիտվել սրբազանի համատեքստում՝ հանդիսանալով տիեզերական համակարգի մի մաս, այնուամենայնիվ գոյություն ունեն առանձին վայրեր, որտեղ սրբազանը կատարում է առաջնային դեր: Որո՞նք են այն չափանիշները, որոնց շնորհիվ այս կամ այն վայրը համարվում է սրբագործված: Այսպես՝

1. Սրբագործված տարածքը պետք է նշանակալի տեղ գբաղեցնի տեղանքում. այդպիսին կարող են լինել բնական բարձունքները, ժայռերը, քարանձավները:
2. Սրբագործված վայրը պետք է հասարակ տարածքից որոշակիորեն առանձնացված լինի⁵:

¹ Turalija A., Vrsaliko A., Juric' G., Kelava I., Drenjancevic' M., Stanisavljevic' A., Lukic' V.. Small Sacral Objects as a Landscape Determination in Croatia. Bulletin , vol. 68, N 1, p. 437.

² Տե՛ս օր.՝ Baleriaux J., Were Rivers Dive? Meaning to Subterranean Rivers in Ancient Greek Thought. Sacral Landscapes.

³ Воловик В. Н.. նշվ. աշխ., էջ 30-31; Романчук С. П., Сакральні ландшафти, Ландшафт, с. 144-146.

⁴ Воловик В. Н.. նշվ. աշխ., էջ 30-31.

⁵ Soszynski D., The Role of Natural Factors in Shaping the Sacral Landscape of the Ropa and Wislok Rivers Interflue (Se Poland), OLPAN 2011, N 8 s. 170; L. Alberty, Over the Rainbow: Places

3. Սրբագործված վայրը պետք է կապված լինի ճանապարհային ցանցի հետ, այսինքն՝ հասանելի լինի այցելուի համար կամ հանդես գա պահապանի դերում (այս համատեքստում պետք է դիտարկել նաև լեռնանցքներում կամ նրանց հարևանությունը գտնվող սրբավայրերը)¹:
4. Պաշտամունքագոյացնող հզորագույն գործոն է խոշոր բնակավայրի առկայությունը. այս իմաստով սրբավայրը կարող է լինել քաղաքագոյացնող գործոն², ինչպես նաև հանդես գալ տվյալ բնակավայրի պահապանի դերում:
5. Կարևոր նշանակություն ունի պաշտամունքային օբյեկտի կապը որսորդություն կամ անասնապահության հետ³:
6. Պաշտամունքային օբյեկտը կարող է առնչվել նաև երկրագործության հետ՝ մարմնավորվելով գետի (կամ նրա ակունքի), բնական տեղումները կանոնավորող լճի կամ լեռան, ցորենի շտեմարանի մեջ⁴:
7. Պաշտամունքագոյացնող գործոնների թվին են պատկանում բնական պաշարների առկայությունը, տեղանքի արհեստագործական կենտրոն հանդիսանալը⁵:

Պաշտամունքային վայրի կառուցվածքը. վերլուծելով պաշտամունքային վայրի ներքին կառուցվածքը դժվար չէ նկատել որ այն ենթարկվում է նույն տրամաբանությանն, ինչ հասարակ տարածքը. սահման, ճանապարհ, կենտրոն: Միաժամանակ, հարկ է նշել, որ նույնիսկ հասարակ տարածքում այս բաղադրատարրերը հաճախ սրբագործվում են⁶:

Կարևորագույն գործոն է հանդիսանում սրբատեղիի զատումը այլ տարածքներից, ինչը խորհրդանշում է սրբագործվածի և աշխարհիկի, «ներսի և դրսի» տարանջատման գաղափարը: Բացի այդ, ինչպես բնակավայրի պարագայում, սրբավայրի դեպքում էլ տարածքային զատումը կարող է խորհրդանշել

with and without Memory in the Funerary Landscape of Knossos during the II Millennium BC, Sacral Landscapes.

¹ Նույն տեղում, էջ 171; **Токарев С.**, Ранние формы религии, М., 1990, с. 603 (թեպետ Ս. Տոկարևը մի շարք գործոններ կապում է միայն լեռների պաշտամունքի հետ, սակայն նույն գործոնները կարելի է վերագրել նաև այլ ռելիեֆային և տեղագրական գոտիների): Հայկական օրինակների համար հմմտ. С. Д. Лисициан, Святыни у перевалов, СЭ 1936, N 4-5, с. 200-212:

² **Оппенхейм А.**, նշվ. աշխ., էջ 89.

³ **Токарев С.**, նշվ. աշխ., էջ 604.

⁴ **Токарев С.**, նշվ. աշխ., էջ 605, A. G. Sagona. The Caucasus Region in the Early Bronze Age. Oxford 1982, vol. I, p. 82.

⁵ **Токарев С.**, նշվ. աշխ., էջ 604, **Кушнарева К. Х.**, Древнейшие памятники Двина. Е., 1977, с. 98-105:

⁶ **Հակոբյան Հ., Գնունի Ա.**, Դիտարկումներ ճանապարհի և փողոցի գործառնական և խորհրդանշական գործառնությունների միասնականության վերաբերյալ, Էջմիածին, 2007, Թ, էջ 89-97:

տվյալ համայնքի (տվյալ պարագայում՝ հոգևոր համայնքի) միասնությունը¹: Այս նպատակին կարելի էր հասնել օգտագործելով ինչպես տեղանքի հնարավորությունները (օրինակ՝ առանձին հրվանդաններ կամ բլուրներ, որոնք կարող են բնակատեղիից, այսինքն՝ հասարակ տարածքից, առանձնացված լինել ձորակներով կամ գետով), այնպես էլ՝ արհեստական ճանապարհով (պարսպի կառուցում կամ որևէ կոթողի տեղադրում): Մյուս կողմից՝ պաշտամունքային կառույցը, ծիսական վայրը կամ միավորը ինքնին կարող են հանդիսանալ որոշակի սահման՝ դրանով իսկ զատելով «սեփականը» «օտարից»²:

Պարսպի խորհրդի հետ է կապված մուտքի/դարպասի գաղափարը, ինչը հաճախ սրբագործվում էր՝ և դառնում պաշտամունքի առարկա³: Դարպասն ընկալվում էր որպես մուտք դեպի սրբագործված վայր՝ միաժամանակ լինելով ամրոցի ամենախոցելի հատվածը⁴:

Տարածքի սրբագործման գործոններից է ճանապարհը. հատելով սահմանը՝ մահկանացուն պետք է մաքրագործվի՝ կենտրոնական, առավել սրբագործված ոլորտ մտնելու համար: Այդ իսկ պատճառով ճանապարհների երկայնքով հաճախ տեղադրվում էին զոհարաններ և պաշտամունքային հարթակներ⁵: Ճանապարհի մաքրագործող գործառույթն ակներև է դամբանային համալիրների պարագայում, երբ վերջիններս հանդես են գալիս որպես հանդերձյալ աշխարհ տանող խորհրդանշական ուղիներ⁶:

Սրբավայրի առանցքը կենտրոնն է, ինչը վերացարկվում է որպես «աշխարհի խորհրդանշական» կենտրոն⁷: Սրբարանը, զոհասեղանը կամ տաճարը գտնվում էին սրբավայրի կենտրոնական հատվածում և հաճախ ցանկապատվում, քանի որ սովորական մարդու մուտքը սրբագործված տարածք համարվում

¹ Հմմտ՝ բնակավայրերի պարագայում՝ Шпенглер О., Закат Европы. М., 1999, с. 118, X. Ортега-и-Гасет. Восстание масс. М., 2002, с. 101.

² Ключевский В. О., Курс русской истории, ч. I, В. О. Ключевский, Сочинения в девяти томах, т. I, М., 1987, с. 134; Գաբրիելյան Մ., Գալոյան Ա., Գնունի Ա., Պարիսպն ու հրապարակը. գործառականի և սիմվոլիկի միասնություն, Երևան, Ե., 2006, էջ 50:

³ Օր.՝ Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 67-68; Маккуин Дж., Хетты и их современники в Малой Азии, М., 1983, с. 107.

⁴ Pausanias, Hellados Periegesis 1, II (1, 4).

⁵ Հակոբյան Հ., Գնունի Ա., նշվ. աշխ., էջ 89-92; հմմտ.՝ Pausanias, Hellados Periegesis 1, II, (2), XXXVI (3).

⁶ Г. Нариманашвили. Новые открытия в Триалети и некоторые вопросы функции, происхождения и распространения ритуальных дорог. АЭФК, Св. Эчмиадзин, 2003, с. 65-67; հմմտ.՝ Крамер С., Мифология Шумера и Аккада. В кн.: Мифология древнего мира. М., 1977, с. 134-135.

⁷ Трифонова И. О., Город как сакральное пространство. <http://medievalrus.narod.ru/trifonova.htm>.

էր անթույլատրելի¹: Բնակավայրի պարագայում նույն գործառույթը կատարում էր կենտրոնական հրապարակը², որտեղ սովորաբար տեղադրվում էր սրբատեղին: Հարկ է նշել որ կենտրոնական հրապարակը ևս որոշակիորեն զատվում էր բնակատեղիի ընդհանուր զանգվածից³:

Եզրակացություն. Սրբազան տեղանք հասկացությունը խիստ էական է յուրաքանչյուր հասարակության ներքին կառուցվածքը հասկանալու համար: Ընդ որում, ինչքան արխայիկ է հասարակությունն, այնքան մեծանում է սրբազան տեղանքի դերը: Կան հասարակություններ, որոնց ձևավորումը ուղղակիորեն կապված է եղել սրբազան տեղանքի ձևափոխումների հետ, երբ քաղաքական կառույցները ի հայտ են եկել և զարգացել են սրբազան կենտրոնների շուրջ: Նման ձևով են ընթացել զարգացումներն ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ դրան մշակութապես հարազատ Կովկասում և Փոքր Ասիայում⁴: Սա է պատճառը, որ սրբազան տեղանքի հետազոտությունը մեր իրականության մեջ պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացնել:

Մ.թ.ա. III-I հազ. պաշտամունքային օբյեկտները և դրանց տիպերը

Խնդրո առարկա հուշարձանները ըստ իրենց արտաքին դրսևորումների կարելի է բաժանել մի քանի տիպերի, որոնց վերլուծությունը թույլ կտա լույս սփռել դրանց գործառույթների վրա:

Մ.թ.ա. III-I հազարամյակների Սյունիքի տարածքի ծիսա-պաշտամունքային հուշարձանները, ըստ կերտման առանձնահատկությունների, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ հարթակներ և կոթողային հուշարձաններ, իրենց համապատասխան ենթախմբերով:

1. Ըստ գործառույթի զոհասեղան հանդիսացող հարթակները բաժանվում են երկու ենթախմբի՝ հիմք ընդունելով դրանց տեղադրության և ձևաբանության առանձնահատկությունները. հարթակ-կառույցներ ու ժայռային ելուստի և ժայռաբեկորի վրա տեղադրված հարթակներ: Հնագիտորեն զոհասեղանի բնորոշիչ գիծ կարող է համարվել համապատասխան նյութի առկայությունը ուսումնասիրվող հատվածում կամ որոշակի ծիսական գոր-

¹ Павлов И. Л., Алтарь-ступа-храм. М., 2001, с. 19-21.

² X. Ортега-и-Гасет, նշվ. աշխ., էջ 101:

³ Ֆ. դե Պոլիգնակի ենթադրությամբ, ակրոպոլիսն ընդհանրապես պետք չէ դիտարկել բնակավայրի համատեքստում (F. de Polignac. Cult, Territory and Origins of the Greek City-State. Chicago 1996, p. 20-22):

⁴ Մանրամասն տե՛ս **Периханян А. Г.**, Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959:

ծողությունների հետքերի առկայությունը: Այս առնչությամբ հարկ է նշել որ Հ. Մարտիրոսյանը, քննելով ժայռապատկերների հարևանությամբ գտնված հնագիտական նյութը, իրավացիորեն նշում է, որ այդ հանգամանքը վկայում է տվյալ տեղանքի զոհաբերության վայր հանդիսանալը¹: Ճարտարապետական տեսանկյունից զոհասեղանի բնորոշիչ հատկանիշներ կարող են համարվել հեղման հետ կապված կերտվածքները (բաժակատիպ փոսեր, ավազաններ, ժայռափոր առվակներ և այլն): Ինչ վերաբերում է միայն ֆալատիպ ելուստով հարթակներին, ապա դրանց դասելը զոհասեղանների կարգին կարելի է համարել վիճահարույց: Հարթակ-կառույցները կարող են տեղադրված լինել ինչպես անմիջականորեն դամբարանի վրա կամ նրան կից, այնպես էլ ամփոփված լինել դամբարանային լիցքի ներքո: Սկզբունքորեն զոհասեղան կարող էին լինել տվյալ դամբարանի հարթ ծածկասալերը: Զոհարանի մեկ այլ տեսակ ներկայացված է դամբարանների վրա կառուցված շինություններով:

2. Կոթողային հուշարձանները պայմանականորեն կարելի է բաժանել երեք ենթախմբի, որոնք ունեն ձևաբանական և պատկերազրական տարբերություններ. քանդակներ և քանդակազարդ քարային կերտվածքներ (սեղանաձև, ուղղանկյուն, գլանաձև, գմբեթաձև, խաչաձև՝ մարդակերպ և ֆալիկ հատկանիշներով, ավելի քիչ՝ կենդանակերպությամբ բնորոշվող կոթողներ), վիշապաքարեր (քառակող՝ դիմային հատվածում ցլի գլխի և վար ընկած ոտքերի պատկերով կամ ձկան տեսքով քանդակված, կամ նախորդ երկուսի հատկանիշները կրող կոթողներ, որոնք հանդես են գալիս յուրահատուկ միջավայրում) և մենհիրներ (մարդու կողմից բնական քարաբեկորի նվազագույն մշակմամբ կերտված կանգուն մենաքարեր):
3. Ծիսա-պաշտամունքային հուշարձանների համակարգում պետք է դիտարկել նաև դամբարանները: Սակայն դամբարանն ինքնին բարդ համակարգ է կազմված բազմաթիվ բաղադրատարրերից՝ հանդիսանալով սրբազան տարածքի յուրատեսակ մանրակերտ:

¹ Տես՝ Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները 6/III, Երևան, 1971, էջ 47: Հմմտ.՝ Арешян Г. Е., Искусство куро-аракской культуры. Материалы II международного симпозиума по армянскому искусству. (отдельный оттиск), Е., 1978, с. 5:

**«ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԱՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Արթակ Գնունի

Բանալի բառեր՝ Սրբազան տեղանք, սրբազան աշխարհագրություն, Հայկական լեռնաշխարհ, կրոնագիտություն, մշակութաբանություն:

Վերջին տասնամյակներում մասնագիտական գրականության էջերում մեծ տեղ է հատկացվում «ծիսական տարածք» հասկացությանը: Խնդրի վերաբերյալ զարգացում են ապրում միջմասնագիտական մոտեցումներ և դա պատահական չէ, քանի որ ծիսական աշխարհագրությունը գտնվում է տարբեր մասնագիտությունների՝ փիլիսոփայության, կրոնագիտության, աշխարհագրության, մշակութաբանության, հնագիտության ուսումնասիրության տիրույթում և առնչվում է մարդկային վարքագծային կանոնների և ինքնության ձևավորման խնդիրներին: Ներկայացվող հոդվածը այդ հասկացությունը դիտարկում է հնագիտական տվյալների լույսի ներքո և դրանք կարևորում հասարակության ներքին կառուցվածքը հասկանալու համատեքստում: Հատուկ շեշտվում է, որ կան հասարակություններ, որոնց ձևավորումը ուղղակիորեն կապված է եղել սրբազան տեղանքի ձևափոխումների հետ, երբ քաղաքական կառույցները ի հայտ են եկել և զարգացել են սրբազան կենտրոնների շուրջ: Նման ձևով են ընթացել զարգացումներն ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ նրան մշակութապես հարազատ Կովկասում և Փոքր Ասիայում: Սա է պատճառը, որ սրբազան տեղանքի հետազոտությանը մեր իրականության մեջ պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացնել:

ПОНЯТИЕ «САКРАЛЬНОГО ЛАНДШАФТА» И ЕГО СТРУКТУРА

Артак Гнуни

Ключевые слова: Сакральный ландшафт, сакральная география, Армянское нагорье, теология, культурология

В последние десятилетия на страницах специальной литературы значительное место уделяется понятию «сакрального ландшафта». Проблема требует междисциплинарного подхода, так как сакральная географии находится на пересечении различных дисциплин: философии, теологии, географии, культурологии и археологии.

В настоящей статье понятие «сакрального ландшафта» рассматривается в свете сархеологических данных, которые рассматриваются с точки зрения общественного развития. Особо отмечается, что возникновение некоторых понятий напрямую связано с изменениями сакрального ландшафта, когда политические структуры возникали и развивались вокруг сакральных центров.

Подобные процессы происходили не только в Армянском нагорье, но и в Кавказе и Малой Азии. В этом состоит основная причина необходимости детального изучения сакрального ландшафта.

CONCEPTION OF THE “SACRED LANDSCAPE” AND ITS STRUCTURE**Artak Gnuni**

Keywords: *“sacred landscape”, sacred geography, Armenian Highland, religious and cultural studies.*

During the last years the idea of “sacred landscape” is often considered in special literature. Towards this conception are being developed interdisciplinary approaches which is caused by the fact that the sacred geography is situated within the scope of different branches among which philosophy, geography, religious and cultural studies, archaeology and is connected with such issues as formation and development of human behavior and identity. The present article considers the mentioned conception from the archaeological point of view and underlines its importance in the context of comprehension of social infrastructures. It tries especially to demonstrate that there exist societies formation of which is directly connected with transformations of sacred landscapes, when political structures appear and develop around the sacred centres. In such a way took place developments both in the Armenian Highland, the Caucasus and Asia Minor. This is the reason why the investigation of sacred landscapes should be given more attention.